ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2025թ. **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԵՎ ԱՆԱՀԻՏ ԹՈՓՉՅԱՆՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն հայ գրող, գրականագետ, գրաքննադատ, դրամատուրգ, արձակագիր, թարգմանիչ Ալեքսանդր և հայ դերասանուհի, արձակագիր, թարգմանիչ Անահիտ Թոփչյանների հիշատակը հավերժացնող հուշատախտակն Ազատության պողոտա հ.3/1 հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱԼԵՔՍԱՆԴՐ ԵՎ ԱՆԱՀԻՏ ԹՈՓՉՅԱՆՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայ գրող, գրականագետ, գրաքննադատ, դրամատուրգ, ածականագիր, թարգմանիչ Ալեքսանդր Թոփչյանը ծնվել է 1939թ. սեպտեմբերի 7-ին, Երևանում:

Ալ. Թոփչյանը սովորել է Երևանի Գրիգոր Խանջյանի անվան թիվ 56 միջնակարգ դպրոցում:

1962թ. ավարտել է Երևանի պետական համալսարանը:

1962-1963թթ. աշխատել է «Պիոներներ կանչ» պարբերականում, 1963-1965թթ.՝ «Հայաստան» հրատարակչությունում, 1966-1975թթ.՝ «Գարուն» ամսագրում, 1975-1988թթ.՝ «Հայֆիլմ» կինոստուդիայում, 1982-1989թթ.՝ Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում որպես գրական բաժնի վարիչ, 1991-1995թթ.՝ ՀՀ ԱԺ լրատվության հանձնաժողովում:

1960-1980թթ. ընթացքում Հայաստանի, Մոսկվայի և միութենական այլ հանրապետությունների գրական մամուլում տպագրված հոդվածները նրան միութենական ճանաչում են բերել:

Ալ.Թոփչյանը հեղինակ է բազում թարգմանությունների՝ ռուսերենից և ֆրանսերենից, որոնց թվում են Մոլիերի, Լարոշֆուկոյի, Շոդերլո դը Լակլոյի, Ապոլիների, Պրեվերի, Կոկտոյի, Ժիրոդուի, Անույի, Ռընարի, Սագանի և այլոց գործերը:

1986թ. պարգևատրվել է Ռուբեն Սևակի անվան մրցանակով, 1992թ.՝ ՀԳՄ Միքայել Նալբանդյանի անվան մրցանակով, 2004թ.՝ Սուրբ Էջմիածնի «Կանթեղ» մրցանակով, 2005թ.՝ ՀԳՄ Դ.Դեմիրճյանի անվան մրցանակով, 2006թ.՝ Պողոսյան մրցանակով, 2009թ. Հայաստանի մշակույթի նախարարության ոսկե մեդալով, 2010թ.՝ Ֆրանսիական կառավարության բարձր պարգև՝ «Արվեստների և գրականության սպայի» (Officier de l’Ordre des Arts et des Lettres) շքանշանով:

Ալեքսանդր Թոփչյանը մահացել է 2021թ. սեպտեմբերի 3-ին, Երևանում:

Հայ դերասանուհի, արձակագիր, թարգմանիչ Անահիտ Թոփչյանը ծնվել է 1947թ. օգոստոսի 21-ին, Արթիկում: Գրող Ալեքսանդր Թոփչյանի կինն է: 1998թ. Հայաստանի գրողների միության անդամ է:

1971թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի ռուս բանասիրության բաժինը:

1967-1991թթ. աշխատել է Երևանի Հ.Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում: Խաղացել է ավելի քան 100 դեր կինոյում, հեռուստաթատրոնում, ռադիոթատրոնում և թատրոնում: 1990թ. հիմնադրել է հեղինակային թատրոն, որի շրջանակներում հյուրախաղերով շրջագայել է բազմաթիվ երկրներում (Ֆրանսիա, ԱՄՆ, Շվեյցարիա, Գերմանիա, Կանադա, Լիբանան, Սիրիա, Կիպրոս)՝ լինելով թատերական բեմադրիչ, տեքստի հեղինակ, դերասան և գեղարվեստական ղեկավար:

Անահիտ Թոփչյանն ունի բազմաթիվ թարգմանություններ՝ կատարած ֆրանսիական գրականությունից: Նրա պատմվածքները թարգմանվել են ֆրանսերեն, իսպաներեն, գերմաներեն, անգլերեն, ռումիներեն, հունարեն, վրացերեն:

1987թ. պարգևատրվել է ՀԽՍՀ վաստակավոր արտիստի կոչումով, 1992թ.՝ Վահան Թեքեյանի անվան մրցանակ, 2010թ.՝ պարգևատրվել է «Հայը 21-րդ դարասկզբին» գրական մրցանակով՝ «Անհետացում» վեպի համար:

Անահիտ Թոփչյանը մահացել է 2021թ. սեպտեմբերի 20-ին, Երևանում;

Ալեքսանդր և Անահիտ Թոփչյանների հիշատակը հավերժացնող հուշատախտակն Ազատության պողոտա հ.3/1 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդությունը ներկայացվել է Հայաստանի գրողների միության նախագահի կողմից: Հուշատախտակի տեղադրման ֆինանսական ծախսերը կատարվելու է ընտանիքի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ